ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 16/07-1

06.06.2016թ. կնքված N ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/6-16/07-1 ծածկագրով «Պետության կարիքների անվադողերի մատակարարման» պետական գնման պայմանագրի

ք.Երևան «24» հունիս 2016թ.

Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի գործերի կառավարիչ Դ. Բեգլարյանի, որը գործում է «Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և «ԱՐՊԱՆԻՎ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Խանդանյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից (այսուհետև՝ Կողմեր), հիմք ընդունելով 06.06.2016թ. կնքված N «ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/6-16/07-1» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 9.4 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Պայմանագրի 4.1 կետում «2051192 (երկու միլիոն հիսունմեկ հազար հարյուր ինսուներկու)» թվերն ու բառերը փոխարինել «271192 (երկու հարյուր յոթանասունմեկ հազար հարյուր ինսուներկու)» թվերով և բառերով:

1.2 Պայմանագրի Հավելված N 1-ում (Տեխնիկական բնութագրում), Հավելված N 2-ում (Գնման ժամանակացույցում) և Հավելված N 3-ում (Վճարման ժամանակացույցում) «2051192» թվերը փոխարինել «271192» թվերով:

1.3 Պայմանագրի Հավելված N 1-ի (Տեխնիկական բնութագրի) և Հավելված N 2-ի (Գնման ժամանակացույցի) աղյուսակներից հանել 1-ին տողերը:

1.4 Պայմանագրի Հավելված N 2-ի (Գնման ժամանակացույցի) և Հավելված N 3-ի (Վճարման ժամանակացույցի) աղյուսակներից հանել «1780000» թվերը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագիրը կազմված է մեկ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկ օրինակ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ կառավարության աշխատակազմ	«ԱՐՊԱՆԻՎ» ՍՊԸ
ք. Երևան, Կառավարական թ.1 շենք	ք. Երևան, Նար-Դոսի 122
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 900011022085	Հ/Հ 002-119584-001
ՀՎՀՀ 02505554	ՀՎՀՀ 09209297
էլ. հասցեն՝ gnumner@gov.am	էլ. հասցեն՝ arpaniv@mail.ru
	Հեռ. (010)541507, (091)205624
Դ. Բեգլարյան /	Ա. Խանդանյան /
Կ.Տ.	Կ.Տ